

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՁԵՌՔԵՐՈՒՄՆԵՐ

Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՂՄԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հատկապես վերջին երկու-երեք տարին հայերենագիտության, առհասարակ հայ լեզվաբանության զարգացման համար եղավ բավականին նշանակալից:

Նկատի ունենք ոչ միայն համապատասխան մասնագետների պատրաստումը մեր հանրապետության բուհերում և ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտում, այլև հայերենի և վերջինիս այս կամ այն չափով առնչվող մյուս լեզուների ուսումնասիրությանը վերաբերող մեծագրությունների, գիտական հոդվածների և զեկուցումների, ինչպես նաև դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների երևան գալը:

Քանի որ հանդեսի սույն բաժնի էջերում այսուհետև անդրադառնալու ենք հայերենագիտության մասն ծեռքերումներին, ուստի անհրաժեշտ ենք գտնում այս համարում իսկ խոսելու վերջին շուրջ երկուսուկես տարում հրապարակային պաշտպանության արժանացած ատենախոսությունների մասին: Վերջիններս զգալի թիվ են կազմում, և ստորև բավարար ենք համարում դրանց համառոտ, բովանդակային սեղմ վերլուծությունը:

Այսպես՝ ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի ներսում գործում է երկու «Հայոց լեզու» և «Օտար լեզուներ» ընդհանուր խորագրով 019 և 09 մասնագիտական խորհուրդ: Առաջինը միացյալ է, որ ընդգրկում է հիմնականում Հ. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտը և Երևանի պետական համալսարանը, իսկ երկրորդը՝ միայն Երևանի պետական համալսարանը: Այդ խորհուրդների առանձին նիստերում վերջին տարիներին հրապարակային պաշտպանության են արժանացել շուրջ երեք տասնյակ դոկտորական և թեկնածուական թեզեր:

Այնուհետև նկատենք, որ 09 միացյալ մասնագիտական խորհրդի տարբեր նիստերում պաշտպանված թեզերը վերաբերում են արդի հայերենագիտության զարգացման տեսակետից որոշակի կարևորություն ներկայացնող հարցերի, որոնք կարելի է առանձնացնել հետևյալ յոթ խմբի մեջ:

Շուրջ մեկ տասնյակ ատենախոսություն նվիրված է եղել հայերենի և այլ լեզուների համամեծական և տիպաբանական առնչությունների քննությանը, ինչպես նաև հայե-

յենի և ուսերենի, անգլերենի, ֆրանսերենի նյութի հիման վրա ընդհանուր և կիրառական լեզվաբանության զանազան խնդիրների ուսումնասիրմանը:

Համեմատական լեզվաբանության նոր տվյալների օգտագործմամբ, իբրև դոկտորական ատենախոսություն, բնմվել է հայերենի և նախահնդեվրոպական լեզվի փոխհարաբերության հարցը (Յու. Գաբրիելյան): Ատենախոսը գտնում է, որ «առանձին ցեղակից լեզուների փաստերը կարելի է համագեցնել ոչ միայն ընդհանուր հնդեվրոպական, այլև նախահնդեվրոպական վիճակին», և կատարում է նման փորձ հայերենի դեպքում:

Առանձին ուշադրության առարկա են դարձել գերմանացի լեզվաբան Յ. Կարստի լեզվաբանական հայացքները (Ա. Գագինյան), որ բավականին ուշագրավ է անցյալի խոշոր լեզվաբանների գործի գնահատության առումով՝ հատկապես գիտության առաջընթացի ներկայիս պայմաններում: Հայ-բասկյան լեզվական առնչությունների հարցը, որը բազմիցս շոշափվել է համաշխարհային և հայ լեզվաբանության մեջ, արժանի է ուշադրության, մասնավոր իր պատմության և հետագա անելիքների նկատառումով (Վ. Սարգսյան):

Այնուհետև, թեկնածուական ատենախոսություններ են գրվել այնպիսի հարցերի նվիրված, ինչպիսին են հայերեն պաշտոնական լեզվի մեջ օտարազգի բառերի գործածությունը (Կ. Միքայելյան), անգլերենի յուրացման ընթացքում հույզերի կարգայնացումը (Ռ. Առաքելյան), գոյականի առկայացումը (դիմորոշություն, որոշյալություն և այլն) ֆրանսերենում և հայերենում (Ա. Բաղդասարյան), զունամիշ բաղադրիչ ունեցող դարձվածային միավորների զուգադրական ուսումնասիրում հայերենի, ռուսերենի և անգլերենի նյութի հիման վրա (Յ. Ղազարյան) և այլն:

Համեմատաբար ավելի մեծ թվով ատենախոսություններ են գրվել հայոց լեզվի պատմության, հայերենի քերականական կառուցվածքի, հայ բառարանագրության, ինչպես նաև հայ գրողների լեզվի և ոճի ուսումնասիրության ուղղությամբ:

Այսպես, հայ բառարանագրական հուշարձանների նոր քննությանն է նվիրված եղել երկու աշխատանք: Դրանցից մեկում փորձ է արվել առանձին քննության առնել 18-րդ դարի հայերեն բառարանները (Ա. Պողոսյան): Ատենախոսը ոչ միշտ է հաշվի առել այդ թեմայի ուղղությամբ վերջին ժամանակներում երևան եկած աշխատանքները, ուստի որոշ հարցեր չեն ստացել իրենց վերջնական լուծումը: Իսկ մյուս աշխատանքը, իբրև դոկտորական ատենախոսություն, նկատելի ներդրում է գրաբարի բառարանագրության ուսումնասիրության մեջ (Գ. Թոսունյան): Հեղինակը կատարել է փաստերի համեմատաբար մանրամասն վերլուծություն, որոշ հարցեր քննության է առել ավելի լայն կտրվածքով:

Հայոց լեզվի միջին շրջանի պատմությունն այսօր լայն ուշադրության առարկա է ոչ միայն հայ, այլև օտարազգի լեզվաբանների կողմից: Այդուհանդերձ, այդ ոլորտը դեռևս մնում է ոչ ամբողջական ձևով ուսումնասիրված: Ուստի այդ ուղղությամբ կատարվող յուրաքանչյուր աշխատանք տեսականորեն արժանի է դրվատանքի: Յ. Աճառ-

յանն իր արմատական բառարանում անդրադարձել է միջին շրջանում հայերենի կատարած եվրոպական փոխառություններին: Դա չի կարելի համարել ամբողջական, ուստի պատահական չէ, որ այդ խնդրի լուծումը ըստ հնարավորին իրականացված է վերջերս գրված առանձին աշխատանքով (Մ. Ղազարյան):

Հայերենի բարբառներից առանձին հետաքրքրություն է ներկայացնում Ոգմի բարբառը: Վերջինս աչքի է ընկնում հնչյունական և բառապաշարի, ոճավորված խոսքի կարևոր առանձնահատկություններով: Այդ ուշագրավ բարբառի ուսումնասիրությունը, ինչպես գիտենք, կատարվել էր տարիներ առաջ, սակայն միայն վերջերս դրվեց հրապարակային ճոր պաշտպանության արժանանլով միացյալ մասնագիտական խորհրդի գնահատությանը (Ն. Հովսեփյան):

Վերը նշեցինք, որ արդի հայերենի բառապաշարի, քերականական կառուցվածքի հարցերը նույնպես եղել են վերջին տարիներին գրված ատենախոսությունների թեմա: Այսպես՝ թե արևելյան և թե արևմտահայ բանաստեղծության լեզուն շարունակում է մնալ գիտական լայն հետաքրքրության ոլորտում: Վերջերս այս ուղղությամբ գրվեց երկու աշխատանք՝ իբրև թեկնածուական և դոկտորական ատենախոսություն: Առաջինում ուշադրության առարկա է եղել 20-րդ դարի արևելահայ չափածոյի բառային անհատական նորաբանությունների առանձնացման և վերլուծության հարցը (Վ. Մելքոնյան): Երկրորդում գիտական ուսումնասիրության լայն շրջանակում քննության է առնված արևմտահայ բանաստեղծության լեզուն՝ կապված վերջինիս ոչ միայն ձևավորման և գեղարվեստականացման խնդրի, այլև առանձին հեղինակների երկերի լեզվական յուրահատկությունների վերհանման և մանրամասն քննարկման հետ (Յու. Ավետիսյան):

Ժամանակակից հայերենի գործառական մի ոլորտն է առօրյա խոսքը, որն աչքի է ընկնում մտածողության որոշակի առանձնահատկություններով: Նման խոսքի դրսևորման մի ձևն էլ երկխոսությունն է, այն հատկանշական գծերով երևան է գալիս նաև գրական երկերում: Ուստի այդ երևույթը գիտական ուսումնասիրությունը խիստ անհրաժեշտ է և գնահատելի: Այս հարցի քննությանը նվիրված ատենախոսությունը նկատելի փորձ է առհասարակ հայերենի առօրյա խոսքի ուսումնասիրության բնագավառում (Ս. Գալստյան):

Ժամանակակից հայերենի կետադրության համակարգը այնպիսին է, որ նրանում նկատելի են և՛ ժառանգորդաբար պահպանված օրենքներ ու կանոններ, և այլ լեզուների ազդեցությամբ բացատրվող նույնպիսի երևույթներ: Այս հարցը մեզանում, ինչպես գիտենք, քննության է առնվել տարբեր լեզվաբանների աշխատություններում: Գիտենք նաև, որ այն առանձին բաժին է հանդիսանում ոչ միայն դպրոցական, այլև բուհական դասագրքերում: Հրապարակի վրա են նաև աշխատանքներ, որոնցում հատուկ ուշադրության առարկա է եղել կետադրության նշանների ծագումը, դրանց անվանումները, իբրև տերմինների, գործածության ժամանակը և այլն: Եվ թվում էր, թե Գ. Ջահուկյանի, Ս. Աբրահամյանի և ուրիշների աշխատանքներից հետո մեզանում լուծված պի-

տի լինելը այդ հարցը: Սակայն պարզվում է, որ այն կարոտ է ավելի մանրամասն քննության: Ուստի Ս. Արքահամյանի գիտական ղեկավարության պայմաններում, որպես թեկնածուական թեզ, հրապարակային պաշտպանության է ներկայացվում և հավանության արժանանում այդ թեմայով գրված աշխատանք (Ա. Սանթրոսյան):

Սեզանում վաղուց ավանդական, նույնիսկ կաղապարված հետազոտության ոլորտ է դարձել լեզվի ոճաբանությունը: Ավելին՝ վերջինս ավելի շուտ գործնական, քան տեսական աշխատանքներով է այսօր զարգանում հայ լեզվաբանության մեջ: Նպատակ ունենալով ոճաբանության հարցերը քննարկել առավելապես տեսական ոլորտում մեզանում գրվել են հատուկ աշխատանքներ (գիտական հոդվածներ, զեկուցումներ և այլն), որոնք որոշակի ձևով պիտի նպաստեն այդ բնագավառի ուսումնասիրությանը նորագույն մոտեցումով: Սակայն դեռևս չարունակվում են գրվել աշխատանքներ նախկին մոտեցումներով:

Այսպես, վերջին երկու-երեք տարում գրվեցին թեկնածուական ատենախոսություններ, որոնք նվիրված են առանձին հեղինակների լեզվի և ոճի ուսումնասիրմանը: Տվյալ դեպքում ուշագրավ է Արցախի բանաստեղծների լեզվաոճական ուսումնասիրությունը (Յ. Ղազարյան): Յեղիմակը ընձել է նրանց երկերի բառապաշարի շերտերն ու վերջիններիս ոճական դրսևորումները, պատկերավորության և արտահայտչական միջոցները, քերականական կառույցների ոճական արժեքը: Այդպիսով ստացվել է բավականին արժեքավոր մի աշխատանք, և որը կարող է նպաստել այդ ոլորտայն քննադատիկ աշխատանքների ծեմնարկմանը: Ծնունդով արցախցի, գրական մեծ վաստակ ունեցող Յ. Խաչատրյանի պատմական վեպերի լեզվաոճական համակարգի քննությանն է նվիրվել հատուկ աշխատանք (Շ. Սադյան): Կոնկրետ դեպքում ատենախոսի բուն նպատակն է եղել վեր հանել անվանի արձակագրի գեղարվեստական խոսքի, պատկերավոր մտածողության այն գծերը, որոնք ընկած են եղել հատկապես պատմական այս կամ այն ժամանակաշրջանի նկարագրման հիմքում:

Ուսերենի և հայերենի ոճական շփման եզրերը բավականին մանրություններ ունեն, ունեն նաև զգալի տարբերություններ: Դա առավել ցայտուն ձևով երևան է գալիս այս կամ այն գրողի երկերի թարգմանության ժամանակ: Նման վերհանման, վերլուծության և գնահատության նպատակ է հետապնդել Ս. Եսենինի չափածոյի հայերեն թարգմանությունների լեզվի ուսումնասիրմանը նվիրված ատենախոսության հեղինակը (Ա. Քամայան): Կարծում ենք, որ սույն աշխատանքի օրինակով հետագայում ևս պետք է շարունակել այս ոլորտայն կատարվելիք աշխատանքները, բնականաբար ուրիշ գրողների երկերի թարգմանությունների նյութի հիման վրա:

Անդրադառնալով գիտական սույն աշխատանքներին՝ չենք կարող աչքաթող անել մեր օրերի այն գիտնականների եռանդն ու ներդրումը, որոնք նպաստել են հիշյալ աշխատանքների իրագործմանը: Այդ աշխատանքները գրվել են գիտական բարեխիղճ ղեկավարման պայմաններում, մասնագիտական փորձի հաղորդման ձևով: Այդ աշխատանքները քննարկվել և ըստ արժանավորության գնահատվել են մեր հանրապետության տարբեր բուհերի համապատասխան ամբիոններում, որոնք ևս լծված են գիտա-

կան կադրերի պատրաստման գործին: Եվ վերջապես մասնագիտական խորհուրդների անդամները, առավել ևս պաշտոնական ընդդիմախոսները մեծ պատասխանատվություն և օբյեկտիվ վերաբերմունք են համղեն բերել յուրաքանչյուր ատենախոսություններ կայացնելու և հայցվող այս կամ այն աստիճանի շնորհման գործում:

Սեր հանրապետության գիտության մի առանձին ճյուղի լեզվաբանության, մասնավորապես հայերենի և նրան զուգահեռ ուսումնասիրվող մյուս լեզուների առաջընթացի տեսակետից խիստ կարևոր այս բնագավառը շարունակում է մնալ գիտական իր բարձրության վրա: Այսօր ևս ՀՀ ԳԱԱ լեզվաբանության ինստիտուտը, մեր հանրապետության բուհերն ունեն մեծ անելիք հայոց լեզվի, առհասարակ լեզվի և լեզվաբանության հետագա զարգացման գործում:

2001-2003 թթ. (ապրիլ) 019 մասնագիտական խորհրդում պաշտպանված ատենախոսությունների սեղմագրերի մատենագիտություն

Առաքելյան Ռ. Ս., Հուլյերի կարգայնացումը անգլերենի յուրացման ընթացքում (թեկն. ատ.), Ե., 2003, 22 էջ:

Ասոյան Թ. Ա., Վենետիկի Մխիթարյանները և աշխարհաբարի հարցերը. XVII-XIX դդ 40-ական թվականներ (թեկն. ատ.), Ե., 2001, 23 էջ:

Ավետիսյան Յու. Ս., Արևմտահայ բանաստեղծության լեզուն (դոկտ. ատ.), Ե., 2002, 50 էջ:
Բաղդասարյան Ա. Ս., Գոյականի առկայացման կարգը ֆրանսերենում և հայերենում (թեկն. ատ.), Ե., 2002, 23 էջ:

Բառնասյան Ջ. Ա., Ժամանականիշ բառերը հայերենի բարբառներում (թեկն. ատ.), Ե., 2002, 27 էջ:

Գաբրիելյան Յու., Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն (դոկտ. ատ.), Ե., 2001, 30 էջ:

Գազինյան Ա. Ռ., Յոզեֆ Կարստի լեզվաբանական հայացքները (թեկն. ատ.), Ե., 2002, 29 էջ:

Գալստյան Ա. Վ., Երկխոսություն ժամանակակից հայերենում (թեկն. ատ.), Ե., 2002, 25 էջ:

Թոսունյան Գ. Բ., Գրաբարի բառարանագրությունը (դոկտ. ատ.), Ե., 34 էջ:

Խաչատրյան Ն. Գ., Հակոբ Պարոնյանի երգիծանքի լեզվաոճական ուսումնասիրություն (դոկտ. ատ.), Ե., 2002, 27 էջ:

Հովսեփյան Ն. Ե., Ոգմի բարբառը (թեկն. ատ.), Ե., 2001, 26 էջ:

Ղազարյան Հ. Զ., Հայերենի, ռուսերենի և անգլերենի զուգանիշ բաղադրիչներով դարձվածքների զուգադրական ուսումնասիրություն (թեկն. ատ.), Ե., 2001, 30 էջ:

Ղազարյան Դ. Ս., Արցախի բանաստեղծական արվեստի լեզվաոճական ուսումնասիրություն (20-րդ դարի 80-90-ական թթ.) (թեկն. ատ.), Ե., 2001, 24 էջ:

Ղազարյան Մ. Ս., Եվրոպական փոխառությունները միջին հայերենում (թեկն. ատ.), Ե., 2001, 24 էջ:

Սելեռնյան Վ. Ս., Բառային անհատական նորաբանությունները 20-րդ դարի արևելահայ չափածոյում (թեկն. ատ.), Ե., 2002, 24 էջ:

Միքայելյան Կ. Ռ., Օտարազգի բառերի գործածությունը հայերեն պաշտոնական լեզվում (թեկն. ատ.), Ե., 2002, 27 էջ:

Պողոսյան Ա. Ժ., Հայ բառարանագրությունը 18-րդ դարում (թեկն. ատ.), Ե., 2002, 25 էջ:

Սաղյան Շ. Պ., Պատմական ժամանակաշրջանի պատկերման լեզվաոճական համակարգը Հայկ հաչատրյանի պատմավեպերում (թեկն. ատ.), Ե., 2002, 31 էջ:

Սանթրյան Ա. Մ., Արդի հայերենի կետադրության համակարգը (թեկն. ատ.), Ե., 2002, 25 էջ:

Սարգսյան Վ. Գ., Հայ-բասկյան լեզվական առնչությունների հարցը լեզվաբանության մեջ (թեկն. ատ.), Ե., 2002, 30 էջ:

Քամալյան Ա. Ս., Սերգեյ Եսենինի չափածոյի հայերեն թարգմանությունների լեզուն (թեկն. ատ.), Ե., 2001, 22 էջ: